ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան
համայնքի ղեկավար՝ պարոն՝
Հ. Բալասյանին
Պատճեն՝ ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան
համայնքի ավագանիներին
Դիմող՝ Արկադի Արամի Հարությունյանի ներկայացուցիչ՝
Վալերի Արամայիսի Գրիգորյան, բնակության
վայրը՝ ՀՀ Կոտայքի մարզ, ք. Բյուրեղավան,
Կոտայքի փողոց, տուն 11

Դիմում

**Հարգելի պարոն Բալասյան և ավագանիներ**

2022 թվականի հուլիսի 26-ին Արկադի Հարությունյանի դիմումի և ավագանու անդամների նախաձեռնությամբ տեղի է ունեցել համայնքի ավագանու հերթական նիստ՝ «ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի Սամվել Վարդանյան փողոցի 24 շենքի 32 բնակարանը Արկադի Արամի Հարությունյանին նվիրելու մասին» օրակարգով: Նիստի ժամանակ Բյուրեղավանի համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել ձեռնպահ մնալ բնակարանը Արկադի Հարությունյանին նվիրելու մասին հարցը ավագանու նիստին քննարկելուց և համապատասխան որոշում ընդունելուց, մինչև ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող թիվ ՎԴ/0295/05/21 քաղաքացիական գործով որոշում ընդունելը:

27.07.2022 թվականին Ա. Հարությունյանը դիմում է ներկայացրել ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ.Գևորգյանին, վերջինիս վարույթում գտնվող թիվ ՎԴ/0295/05/21 քաղաքացիական գործը ըստ հայցի Արկադի Արամի Հարությունյանի ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի և նույն համայնքի ավագանու անդամների, հայցապահանջից ամբողջությամբ հրաժարվելու մասին:

26.07.2022 թվականին համայնքի ավագանու հերթական նիստին ձերք բերված պայմանավորվածության համաձայն՝ խնդրում եմ հրավիրել արտահերթ նիստ՝ «ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան քաղաքի Սամվել Վարդանյան փողոցի 24 շենքի 32 բնակարանը Արկադի Արամի Հարությունյանին նվիրելու մասին» օրակարգով:

Ներկայացնում եմ ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մ.Գևորգյանին հասցեագրված հայցապահանջից ամբողջությամբ հրաժարվելու մասին դիմումի պատճենը:

Դիմողի ներկայացուցիչ՝ Վ. Գրիգորյան

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՏԻՑ N 4-1665/22
«29» 07 2022 թ.

29.07.2022թ.

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության
դատարանի դատավոր պարոն
Մ. Գևորգյանին

Հայցվոր՝ Արկադի Արամի Հարությունյանից, բնակության
վայրը ՀՀ Կոտայքի մարզ, ք. Բյուրեղավան,
Ս. Վարդանյան փողոց, շենք 24, բն. 32

Դիմում

**Հարգելի դատարան**

ՀՀ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում թիվ ՎԴ/0295/05/21 քաղաքացիական գործը ըստ հայցի Արկադի Արամի Հարությունյանի ընդդեմ ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի և նույն համայնքի ավագանու անդամների, որով 30.08.2022 թվականի, ժամը 12:00-ին նշանակվել է նախնական դատական նիստ:

26.07.2022 թվականին Բյուրեղավան համայնքի ավագանու հերթական նիստի ժամանակ ավագանու անդամները խոստացել են հարցը լուծել արտադատարանական կարգով, համայնքի ավագանու հաջորդ նիստին:

Հետևաբար հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հայցվորի իրավունքը՝ ամբողջությամբ հրաժարվում եմ հայցապահանջից:

Դիմող՝ Ա. Հարությունյան

27.07.2022թ.

27.07.22թ